

ՀՕՄ-ի 101-րդ եւ Գանատայի Ծրջանի 25-րդ Պատգամաւորական Ժողովը կայացաւ Թորոնթոյի մէջ



Կարդալ էջ 6

Համա-ՀՄԸՄ-ական 11-րդ մարզախաղերու բացման հանդիսութիւնը. Բազմահարիւր ՀՄԸՄ-ականներ տողանցեցին Երեւանի մէջ



Կարդալ էջ 3

ՀՅԴ Բիւրոյի Անդամ Մուրատ Փափագեանին Կ'արգիլուի Հայաստան Մտնել

Փաշինեանի հրամանով՝ Յրանսայի հայկական կազմակերպութիւններու համակարգող խորհուրդի համանախագահ, ՀՅԴ Բիւրոյի անդամ եւ Հայ դատի գործիչ Մուրատ Փափագեանին երէկ երեկոյեան արգիլուած է Հայաստան մուտք գործել՝ իբրեւ անցանկալի անձ:

Իր էջին վրայ յաւելեալ մանրամասնութիւն տալով՝ Մ. Փափագեան նշեց, որ ոստիկանութիւնը արգիլած է իր Հայաստան մուտքը, գրաւած է անձնագիրը, մինչեւ դէպի Յրանսա յաջորդ թռիչքը զինք պահած է փոքր սենեակի մը մէջ:

«Գիտէի, որ Ատրպէյճան եւ Թուրքիա մուտքս արգելուած է, եւ հիմա իմացայ նաեւ, որ արգելուած է Փաշինեանի կողմէ՝ Հայաստան:

«Հայաստանի, հայութեան ու Հայ դատի համար 40 տարուան պայքարէ ետք նման վերաբերմունքի «արժանանալը» ուղղակի ցաւ կը պատճառէ ինծի: Նիկոլ Փաշինեանի այս որոշումը յաւելեալ փաստ է, որ ան իրեն տրուած պատասխանատուութեան բարձրութեան վրայ չէ: Ան ուժեղ հարուած կու տայ, երբ իր ոստիկանութենէն կը պահանջէ Հայ դատի գործիչը վտարել, բայց կը պատկերացնէ՞ք, որ այս փոքրիկ ղեկավարը բանավիճի էրտողանի եւ Ալիեւի հետ: Ուշ կամ կանուխ Հայաստանի ժողովուրդը պիտի համոզուի, որ պէտք է ձերբազատի այս ղեկավարէն, որ ամէն ճիգ ի գործ կը դնէ Հայաստանը տկարացնելու համար: Սփիւռքը նոյնպէս կը հասկնայ ասիկա: Բայց արդէն ժամանակն է ըսելու՝ կա՛նգ առ», կը գրէ ՀՅԴ Բիւրոյի անդամը:

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի յայտարարութիւն

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէն ու ամբողջ կառոյցը՝ խստիւ կը դատապարտեն ՀՅԴ Բիւրոյի անդամ Մուրատ Փափագեանի Հայաստան մուտքի արգիլումը:

Այս վարքագծով, Հայաստանի Հանրապետութեան ղեկին յայտնուած վարչա-խումբը, կամայականօրէն ու գծուծ կերպով՝ անդամ մը եւս կ'ոտնահարէ ժողովրդավարութեան տարրական սկզբունքներն ու հափանիչները եւ կը հարուածէ Հայաստանի պետական շահերը:

Իբրեւ Յրանսահայ կազմակերպութիւններու համակարգող խորհուրդի (CCAF) համանախագահ, Մուրատ Փափագեան բազմիցս ընկերակցած կամ գլխաւորած է ֆրանսական պետական բարձրաստիճան պատուիրակութեանց այցելութիւնը Հայաստան: Ան այս պարտականութիւնը կամովին իր ուսերուն առած է տասնամեակներէ ի վեր՝ ի շահ Հայաստանի ու Արցախի: Հայրենիք իր մուտքի խափանման առիթով, Հայաստանի Հանրապետութեան ներկայի իշխանութիւնը պարտաւոր է անյապաղ բացատրութիւն տալ կատարուածին առնչութեամբ:

Ժողովրդավարութեան «դրօշակիր» իշխանութիւններու այս գործելաոճը յստակօրէն կը փաստէ, որ կատարուածը շարունակութիւնն է իշխանութեանց շղթա-

Գանատա... Ծար. էջ 5

Խստիւ դատապարտում ենք Մուրատ Փափագեանի հանդէպ կիրառուած ապօրինի քայլը. ՀՅԴ Բիւրոյի յայտարարութիւնը

Հայաստանի ապագային իշխանութիւնների սահմաններ չճանաչող անհանդուրժողականութիւնը նորանոր դրսեւորումներ է ստանում: Այս գիշեր առանց բացատրութեան ու հիմնաւորման արգելուել է Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ, Յրանսայի հայկական կազմակերպութիւնների համակարգող խորհրդի (CCAF) համանախագահ՝ Մուրատ Փափագեանի մուտքը Հայաստան:

Հայաստանի, Արցախի եւ Հայ Դատի համար տասնամեակներ պայքարած ազգային գործչի նկատմամբ նման վերաբերմունքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ քինախնդիր, փոքրոգի քայլ եւ թշնամուն հաճոյանալու պարզունակ դրսեւորում:



Բիւրո... Ծար. էջ 5

YES YOU CAN

Introducing,
The All-New HR-V



CONTACT US FOR
MORE INFORMATION

**KEVORK ASADOURIAN
TRO BACHEKJIAN**

 

7000, boul. Henri-Bourassa Est
Montréal-Nord, (Québec) H1G 6C4
☎ : 514 321-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Մեփականատէր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնութիւն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիթի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Հայաստանի մէջ գանատական դեսպանատան հաստատումը Կ’ամրապնդէ մեր պետականութեան շահերը

Գանատան առաջին պետութիւններէն էր, որ Խորհրդային Միութեան կազմաքանդումէն անմիջապէս ետք ճանչցաւ Հայաստանի անկախութիւնը՝ 1991 թուականին: 1992 թուականի Յունուար 31–ին, Գանատան եւ Հայաստանը պաշտօնապէս հաստատեցին դիւանագիտական երկկողմանի յարաբերութիւններ: Հայաստանի Հանրապետութիւնը 1995 թուականին Օթթաուայի մէջ բացաւ իր դեսպանատան դռները: Այսօր, Հայաստանի Հանրապետութեան Օթթաուայի դեսպանատան բացումէն 27 տարի ետք, 29 Յունիս 2022–ին, Գանատայի արտաքին գործոց նախարար Մելանի ժոլի պաշտօնապէս յայտարարեց, թէ Գանատան դեսպանատուն մը պիտի հաստատէ Հայաստանի մէջ:

Իր խօսքին մէջ, Գանատայի արտաքին գործոց նախարարը յատկապէս շեշտադրեց Հայաստանի մէջ ժողովրդավարութեան ամրապնդման ուղղուած Գանատայի պետական աջակցութեան կարեւորութիւնը, որ իսկապէ՛ս պիտի նպաստէ Հայաստանի մէջ ժողովրդավարական արժէքներու տարածման, քաղաքական համակարգի վերահսկողութեան ապահովման, դատական համակարգի բարեփոխման եւ տնտեսութեան կայունացման ուղղուած գործընթացին:

Ժողովրդավարութիւնը ժամանակակից քաղաքակրթուած հասարակարգի զարգացման նախապայմանն է, եւ այսօրուան դրութեամբ, Երեւանի մէջ գործող ոչ մէկ վարչակարգ չի կրնար ժողովրդավար դասուիլ, այնքան ատեն որ գործող իշխանութիւնները կ’անտեսեն սահմանադրութիւնը: Այս իմաստով, այսօր, աւելի քան կարեւոր է գանատական ժողովրդավարութեան ներդրումը Հայաստանի Հանրապետութեան այսօրուան ներքաղաքական օրակարգին մէջ, երբ հիմնականօրէն կը բացակային օրէնքի բացարձակ գերակայութիւնն ու դատական համակարգի անկախութիւնը:

Միաժամանակ Գանատա–Հայաստան տնտեսական ներդրումներու եւ առեւտրական յարաբերութիւններու իրաւապայմանազրային ծիրը ընդարձակելու գծով նորահաստատ դեսպանատունը ունի յոյժ կարեւոր առաքելութիւն, որ ապագային պիտի նպաստէ Հայաստանի տնտեսութիւնը Հիւսիսային Ամերիկայի եւ եւրոպական երկիրներու չափանիշներուն մերձեցնելու եւ միջազգային համարժէք որակի ու մակարդակի բարձրացնելու:

Գանատական դեսպանատան գործօն առկայութիւնը աներկբայօրէն պիտի նպաստէ նաեւ հարաւային Կովկասի տարածաշրջանի կայունութեան, համագործակցութեան, անվտանգութեան ու խաղաղութեան հաստատման ուղղուած աշխատանքներուն եւ Հայաստանն ու Արցախը պիտի վերածէ Գանատայի արտաքին քաղաքականութեան ուշադրութեան արժանի աշխարհագրական առանցքային շրջաններէն մէկը:

Հաղորդագրութիւն ՀՅԴ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի՝ Հայաստանի մէջ գանատական դեսպանատուն հաստատելու յայտարարութեան կապակցութեամբ

29 Յունիս 2022–ին, Գանատայի արտաքին գործոց նախարար՝ Մելանի ժոլի, ՕթԱՆ–ի վեհաժողովի ընթացքին յայտարարեց թէ երկար տարիներու բացակայութեանէ ետք, Գանատան վերջապէս դեսպանատուն մը պիտի հաստատէ Երեւանի մէջ:

ՀՅԴ Գանատայի Հայ Դատի յանձնախումբը անմիջապէս ողջունեց սոյն յայտարարութիւնը, գայն որակելով որպէս երկար տարիներու տքնաճան ու հետեւողական աշխատանքի արդիւնք եւ որպէս Հայաստանի Հանրապետութեան պետական վարկանիշին ու շահին նպաստող դիւանագիտական կարեւոր զարգացում:

Երկար տարիներով սպասուող այս յայտարարութիւնը բնականաբար գոհունակութեան ու գնահատանքի մեծ ալիք բարձրացուց գանատահայութեան մօտ, որ աւելի քան երեսուն տարիներ ներկայացուցած էր սոյն պահանջը Գանատայի պետութեան: Բայց եւ այնպէս, հայրենի եւ սփիւռքեան կարգ մը շրջանակներ, տեղի եւ անտեղի հիմնաւորումներով սոյն յայտարարութիւնը ենթարկեցին տարատեսակ մեկնա–

Համա–ՀՄԸՄ–ական 11–րդ մարզախաղերու բացման հանդիսութիւնը. Բազմահարիւր ՀՄԸՄ–ականններ տողանցեցին Երեւանի մէջ

Հայութեան «կամաւոր բանակ»–ը՝ ՀՄԸՄ–ը այսօր Երեւանի մէջ արժանավայել շուքով կատարեց իր մարզախաղերուն բացումը, անգամ մը եւս փաստը տալով, որ ինչքան ալ դժուար ու ծանր պայմաններ դիմագրաւեն մեր ժողովուրդն ու հայրենիքը, 104–ամեայ ՀՄԸՄ–ը կը մնայ այն երիտասարդ ու կենսունակ միւռ–թիւնը, որ գիտէ յոյս, խանդավառութիւն եւ աւելի լաւ ապագայ ներշնչել բոլորին:

Յուլիս 22–ին, մարզախաղերու մասնակից պատուիրակութիւններն ու ՀՄԸՄ–ական 645 մարզիկ–մարզիկուհիները Մաշտոցի անուան Մատենադարանի առջեւէն շքերթով մը ուղղուեցան բացման հանդիսավայր՝ «Ազատութեան» հրապարակ: Շքերթը առաջնորդեց ՀՄԸՄ–ՀԱՍԿ–ի սկսուտական շքախումբը: Հրապարակին մօտակայ պողոտային մէջ, շքերթի մասնակիցներուն միացան «Հրաշք» մարզախաղերու մասնակից, յատուկ խնամքի կարօտ 200 պատանի–երիտասարդ–ներ, ընկերակցութեամբ իրենց օժանդակող աւելի քան 50 կամաւորներու:

Հանդիսութեան պաշտօնական խօսք առաւ ՀՄԸՄ–ի Կեդրոնական Վարչու–թեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան, որ խօսելով ՀՄԸՄ–ի իւրայատկութեան մասին շեշտեց, որ «ՀՄԸՄ–ական մարզիկը ուրիշներէն կը զատորոշուի իր ազգա–յին ազնիւ նկարագիրով եւ Հայաստանին ու հայ ժողովուրդին հանդէպ ունեցած մեծ նուիրումով: Այս իրականութիւնը անգամ մը եւս հաստատուեցաւ, երբ Արցախի պաշտպանութեան կոչին ընդառաջելով, ՀՄԸՄ–ականներ սլացան մինչեւ գերագոյն գոհաբերութիւն: Անոնք ոչինչ խնայեցին Արցախի սրբազան հողին ու դատին պաշտպանութեան համար, որովհետեւ այդ պաշտպանութիւնը իր տարբեր երեսներով կը ծառայէր մէկ ու միակ նպատակի՝ տէր կանգնելու հայութեան իրաւունքներուն, մեր հայրենիքի հողային ամբողջականութեան եւ մեր ժողովուրդի հաւաքական անվտանգութեան»:

Գանատահայութեան հաւաքական կամքը ներկայացնող մեծագոյն քաղաքական կազմակերպութիւն, ՀՅԴ Գանատայի Հայ Դատի յանձնախումբը՝ հեռատես փորձառութեամբ, տասնամեակներ առաջ Գանատայի տարածքին կեանքի կոչեց Հայ Դատի յանձնախումբերը, որոնք այսօրուան դրութեամբ, վիթխարի ճանապարհ կտրած են Հայաստանի եւ Գանատայի միջեւ քաղաքա–կան եւ դիւանագիտական ոլորտի ամրապնդման ուղղութեամբ:

Անցնող երկու տասնամեակներուն, Հայաստանի Հանրապետութեան մէջ գանատական դեսպանատան մը հաստատումը եղաւ Հայ Դատի յանձնախումբի կարեւորագոյն առաջնահերթութիւններէն մէկը, հիմնուած՝ գանատահայու–թեան տարիներու վրայ երկարող պահանջքին ու բաղձանքին վրայ, եւ այդ ուղղութեամբ, Գանատայի Հայ Դատի յանձնախումբերու կամաւոր եւ բազմաբեւեռ ծառայութիւնը ուղղուեցաւ այս նախաձեռնութեան յաջողութեան: Այս ծիրէն ներս, Գանատայի Հայ Դատի Շրջանային յանձնախումբը եւ յանձնախումբի Օթթաուայի գրասենեակը նպատակաուղղուած արշաւ ծաւալեցին համագանատական առումով, յատկապէս մայրաքաղաք Օթթաուայի մէջ, դաշ–նակցային օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւններու մակարդակի վրայ:

Դեսպանատունը ներազդեցութեան լծակ պիտի հանդիսանայ Գանատայի Դաշնակցային կառավարութեան մօտ՝ Արցախի բնակչութեան հիմնարար իրաւունքներու պաշտպանութեան եւ պատերազմէն ետք պարտադրուած մեկուսացման վերացման համար, եւ ենթածիրէն ներս, Գանատայի Հայ Դատի յանձնախումբը ջանք պիտի չխնայէ, որպէսզի Արցախի բնակչութեան ազատ ինքնո–րոշման, մարդկային իրաւանց պաշտպանութեան եւ ազատ տեղաշարժման գծով նորահաստատ դեսպանատունը կատարէ իր առաքելութիւնը:

Գանատայի Հայ Դատի յանձնախումբին համար սկզբունքային հիմնախնդիրներ եղած են Հայաստանի եւ Արցախի անվտանգութեան, տարածքային ամբողջականութեան, կայունութեան ու զարգացման հետեւողական ապահովումը, Արցախ–Հայաստան–Սփիւռք բազմակողմանի կապերու ամրապնդումը, հայ ժողովուրդի տարբեր հատուածներու միջեւ փոխըմբռնման, միասնութեան եւ համախմբուածութեան միջոլորտի ապահովումը: Այս ուղղութեամբ, յանձնախումբը տարիներու ընթացքին կատարած է ընդգրկուն, լայնածիր եւ արդիւ–նաւէտ աշխատանք, իսկ գանատական դեսպանատան հաստատման իրագործու–մը՝ պատմականօրէն եւ քաղաքականօրէն շրջադարձային է, որ միայն ու միայն պիտի նպաստէ հայութեան պետական շահերուն:

«Հորիզոն»

բանութիւններու, նսեմացնելով սոյն որոշման էական կարեւորութիւնն ու արժէքը:

Հետեւաբար, որպէս գանատահայութեան հաւաքական կամքը ներկայացնող մեծագոյն քաղաքական կազմակերպութիւն, ՀՅԴ Գանատայի Հայ Դատի յանձնախումբը կու գայ հաստատելու թէ՛

Անցնող երեք տասնամեակներու ընթացքին ու նամանաւանդ Արցախեան աղէտալի պատերազմէն ետք, Հայաստանի Հանրապետութեան մէջ գանատական դեսպանտան մը հաստատումը եղաւ Հայ Դատի յանձնախումբի կարեւորագոյն ու մնաւորն քաղաքական առաջնահերթութիւններէն մին, բացարձակապէս հիմնուած ըլլալով գանատահայութեան երկար տարիներու պահանջքին ու բաղձանքին վրայ, առանց ոչ մէկ ուշադրութիւն կամ կարեւորութիւն դարձնելու տուեալ պահու իշխա–նութեանց, մանաւանդ՝ ՀՀ ներկայ ազգադաւ իշխանութիւններուն:

– Գանատահայութեան պահանջը գոհացնել անկախ, իր էութեամբ, սոյն գործընթացը միշտ ուղղուած էր ամրագրելու Հայաստանի Հանրապետութեան պետական վարկանիշը ու պաշտնպանելու անոր պետական շահերը, առանց ուղղուած ըլլալու երրորդ կողմի մը: Անկախ՝ Գանատայի իշխանութեանց կողմէ եղած յայտարարու–թեան քաղաքական ձեւակերպումներէն կամ այլ պետութեանց արձագանգներէն, Հայ Դատի յանձնախումբին համար բացարձակապէս անընդունելի է սոյն որոշումը օգտագործել որպէս բախման կէտ՝ Արեւելք–Արեւմուտք հետզհետէ վատթարացող պայքարին մէջ: Յանկացած նման մեկնաբանութիւն միայն կրնայ վնասել Հայաստտանի պետական շահերուն:

– Իրբեւ Գանատայի քաղաքացիներ, մեզի համար առաջնային է նաեւ երկու երկիրներու միջեւ քաղաքական, դիւանագիտական, տնտեսական, մշակութային ու ժողովուրդէ ժողովուրդ յարաբերութիւններու էական զարգացումը, որ միայն կրնայ օգտակար դառնալ Հայաստանի Հանրապետութեան ու անոր երկարաժամկէտ ռազմավարական շահերուն: Այստեղ նաեւ հարկ է նշել մէկ այլ կարեւոր հանգամանք, թէ Գանատա այսօր Հարաւային Կովկաս մուտք կը գործէ Հայաստանի միջոցաւ եւ ոչ Ատրպէյճանի, ինչ որ ինքնին քաղաքական յստակ պատգամ է Պաքուին, մանաւանդ նկատի ունենալով որ Պաքուի հետ Գանատա ունի շատ աւելի շահաւէտ տնտեսական յարաբերութիւններ:

– Վերջապէս, սոյն գործընթացի յաջողութիւնը անգամ մը եւս ապացոյց է, թէ Դաշնակցութիւնը եւ իր Հայ Դատի մարմինները, ըլլան անոնք հայրենիքի մէջ կամ այլուր, երբեք չեն գործած ինքնանպատակ, մշտապէս գերադասելով պետութեան շահը եւ հաստատօրէն հաւատալով, որ իշխանութիւնները գնայուն են, իսկ պետու–թիւնն ու անոր շահը՝ մնայուն:

Հետեւաբար, վերահաստատելով վերոնշեալ կէտերը, կու գանք անգամ մը եւս վերանորոգելու մեր վճռակամութիւնն ու յանձնառութիւնը շարունակելու մեր առաքելութիւնը յանուն գանատահայութեան եւ ի սպաս մեր զոյգ պետականութեանց շահին ու վերելքին:

ՀՅԴ Գանատայի Հայ Դատի Յանձնախումբ

15 Յուլիս, 2022

Խանասո՛ր. Արիություն, Կամքի Եւ Յանդգնություն Արշաւանքը (125-Ամեակ)

Նորահաս սերունդի ոեւէ ներկայացուցիչ կրնայ ըսել, որ տարբեր էին այդ ժամանակները, բայց եւ այն–պէս մեր ըսելիքն այն է, որ տուեալ ժամանակին մէջ ապրող ու գործող մարդիկն ալ կը զատորոշուէին իրենց մեծահոգութեամբ, խոնարհ եւ ազնուասիրտ ըլլալու յատկութեամբ։

Ճիշդ է, որ ժամանակի հասկացութիւնը, այս պա–րագային, չունի ճշգրտոշիչ վայր ու թուական, այլ անիկա ընդգրկուն է եւ կը պարփակէ անցեալ մը ամ–բողջ, հեռաւոր թէ մօտիկ, այդուհանդերձ, հայութեան ընդերքը միշտ ալ ծնունդ տուած է այնպիսի փաղանդ–ներու, որոնք, պահ մը, տուեալ ժամանակին մէջ ցոյց տուած են իրենց ցեղային արժանիքը եւ գալիք սե–րունդներու ժառանգ են թողած այնպիսի հերոսագրու–թիւն, որով հպարտացած է ամբողջ ժողովուրդ մը, ու ցարդ կը շարունակէ հայկականութեամբ լեցուիլ մեր օրերու ազգային մարդը, յեղափոխական գործիչը եւ արարատաէր տղան։

Բոլոր ազատատենչ ազգերու նման, հայութիւնն ալ ունեցած է «սրտի տղաներ», որոնք տուեալ ժամա–նակի շունչին ու մթնոլորտին համապատասխան ցոյց տուած են իրենց կազմաւորումին թէ նկարագրային առանձնայատկութեան տեսակը, որակը եւ գիտակցա–կան մակարդակը։

Իր դարաւոր ստրկութեան թմբիրէն հազիւ արթն–ցած, հայութեան մէկ մասնիկը, 19–րդ դարու աւարտին, շնորհիւ ազգային կեանքի զարթօնքին եւ հայաբոյր սերունդի մը անմնացորդ նուիրումին, արդէն մարտի էր ելած բարբարոս թուրքին դէմ՝ իր չալակին ունենալով ազգի տառապանքն ու հոգը, ազատ շնչելու եւ անկախ ապրելու սերունդներու երազանքը։

Հայոց պատմութեան էջերուն ոսկեայ տառերով արձանգորուած դրուագ մը կայ, ի շարս տարբեր յեղա–փոխական արարքներու, որ իր եզակի դերն ու իմաստը ունեցած է օրին ու կը շարունակէ ունենալ նաեւ այսօր, մանաւանդ` ՀՅ Դաշնակցութեան ողջ պատմութեան պահուածքին մէջ։

Յեղափոխական դրուագ մը, որ պատժական բնոյթ ունի եւ իր մէջ կը կրէ բոլոր ժամանակներու ռազմագիտական ուսմունքը` հարուածել թշնամին իր որջին մէջ, բարոյալքել զայն ու զգեսնել անոր կորովը։

Իրօք, իրերայաջորդ սերունդներու համար այս արշաւանքը եղած է տիպար օրինակ մը` իբրեւ գաղա–փարական աշխարհի սնուցիչ տարր, ներշնչման աղբիւր եւ ինքնակատարելագործման վարակիչ արտայայտու–թիւն։

Փաստօրէն, ինչ որ յետնորդ սերունդներու սրտին ու մտքին մէջ ամրապնդուած գեղեցկութիւն մը մնա–ցեր է այս դրուագէն, զայն կարելի է պարփակել երկու բառի մէջ. կազմակերպուածութիւն եւ յանդգնութիւն։ Իրականութեան մէջ, ժողովուրդներու թէ ազգերու պատմութեան խորապատկերին, ինչպիսի՝ արժանիքներ յաճախ ընդգծուեր են յանուն ինքնաճանաչողութեան եւ հպարտանքի՝ եթէ ոչ յիշեալ երկու բառերու խորա–գոյն իմաստները՝ իբրեւ հայեցակարգ եւ բարոյահոգե–բանական ուսմունք։

25 յուլիս 1897։ Խանասորայ արշաւանքին 125–ամեակն է։

Պահ մը, ի մտի ունենալով հանդերձ հայ չըջապա–տի մէջ առկայ այն մօտեցումը կամ վերաբերումը տուե–եալ դրուագին մասին` զայն շղարշելով զգացականու–թեամբ եւ աննպատակայարմարութեամբ, ահաւասիկ, արժէ կրկին լոյսին բերել եւ յիշեցնել ճշմարտութիւն մը անսեթեւեթ, որ կարմիր թելի պէս կ'երկարի հայ ժո–ղովուրդի ծնունդէն ի վեր, այդ ալ` հայու զգացակա–նութիւնն է, անհանդուրժողութիւնը, յաճախ պառակտ–ուած ըլլալու իրողութիւնը, անտեղի ողբն ու ճակա–տագրապաշտութիւնը, մանաւանդ` երբ թշնամի ուժեր ուզած են գրաւել ամրոց մը, քաղաք թէ հայրենիք մը ամբողջ։ Աւելի՛ն. հայու թշնամիին, յատկապէս թուր–քին, երբեւէ պատճառ պակասած չէ ջարդելու հայը եւ տիրելու անոր հայրենիքին։

Բարեբախտաբար, դաշնակցական մամուլը տաս–նամեակներ շարունակ յիշած ու լոյսին բերած է Խանա–սորի սիրանքին ամբողջական պատկերը։ Փաստօրէն, հայ գրիչն ու միտքը ըստ էութեան արժեւորած եւ գնահատած է յեղափոխական այս դրուագը, ընդհան–րապէս չեչտադրելով անոր սնուցած թելադրականու–թիւնը հայ կեանքին մէջ։

1895–96 համիտեան համատարած ջարդերը ցնցած էին ողջ հայութիւնը։ Վանի հայութիւնը կրցած էր դիմել զէնքի եւ ցոյց տալ ըմբոստութեան ոգին։ Հա–յաբոյր այս քաղաքին մէջ տիրապետող էր միասնակա–նութեան շունչը, հայդուկներու փոխադարձ յարգանքն ու իրարու զօրավիգ կանգնելու գիտակցութիւնը։ Ի տես



Դաշնակապետները 1900 թ. Վանի ճակատամարտից հետո

այս կացութեան, օսմանեան պետութիւնը ամէն ճնշում ի գործ կը դնէ, որ Վանի հերոսամարտին մասնակից հայդուկները հեռանան քաղաքէն` վար դնելով իրենց զէնքերը։

Հայ յեղափոխականներ կը գտնուէին տարակու–սանքի մէջ, մնա՞լ, թէ՞ թողնել Վանը ու հեռանալ դէպի Պարսկաստան։ Քանի մը մասի բաժնուած հայդուկնե–րու խումբեր կ'որոշեն հեռանալ քաղաքէն եւ ապաս–տան գտնել Պարսկաստան։

Օրուան հայդուկապետը` դաշնակցական Պետօ, հնչակեան Մարտիկ եւ արմենական Աւետիսեան, կ'որո–շեն ընթացք տալ, այսպէս ըսած, ընդհանուրի այն որո–շումին` դուրս գալու քաղաքէն, եւ Վասպուրականի վրայով անցնիլ պարսկական հողեր։ Ու այդ ժամանա–կամիջոցին եւ աշխարհագրական տարբեր վայրերու մէջ աւելի քան 800 զինեալ տղաներ զոհ կը դառնան թշնա–մի ուժերու հարուածներուն։

Փաստօրէն, Վասպուրականի լեռնաշխարհի մէջ մեր տղաները թիրախ կը դառնային քրտական խում–բերու, որոնց չարքին՝ մագրիկ ցեղախումբին, եւ անոնք մինչեւ վերջին փամփուշտ կռուելով կը նահատակուէ–ին։ Ահաւոր հարուածին լուրը ոչ միայն բարոյալքած էր յեղափոխականները, այլ նաեւ ժողովուրդը, որ կ'ապրէր դժոխային պայմաններու մէջ։

Պէտք էր վրէժը լուծել սրբազան տղոց, որոնք դա–րանակալ քիւրտին զոհն էին դարձեր։ Հայուն պէտք էր վրէժխնդրական արարք մը, որով պիտի կարենար դուրս գալ հիասթափութենէ եւ անոր վերադարձնել ինք–նավստահութիւնը։

Այս ահագնագոռ կացութեան մէջ, ահաւասիկ, դաշնակցական անկրկնելի հայդուկապետ մը, որ կը յատկանշուէր իր աննկուն կամքի, հմուտ ռազմագէտի, քաջ ու հեռատես յեղափոխականի արժանիքով, կը յղա–նար միտք մը` պատժել թշնամին եւ ցոյց տալ հայու կամքին ու յանդգնութեան զօրութիւնը։

ՀՅ Դաշնակցութեան ռայոնական ժողովը (1896), ճիշդ է, որ կ'որոշէր արշաւանքի կազմակերպումը, ըն–թացք տալով Նիկոլ Դումանի մտայղացքին, այդու–հանդերձ, կային դաշնակցական ընկերներ, որոնք դէմ էին նման ցուցական արարքի մը, պարզապէս առարկե–լով՝ արշաւանքին կազմակերպչական աշխատանքի լայն տարողութիւնն ու ժամանակի խիստ սահմանա–փակումը։

Աննման ռազմավար Նիկոլ Դումանի կը յանձն–ուէր կազմակերպչական աշխատանքը իր լրումին հասցնելու պարտականութիւնը։ Շնորհիւ Քրիստափորի եւ Խոստոմի անմնացորդ նեցուկին, Նիկոլ Դուման կը յաջողի, տիւ եւ գիշեր աշխատանք ու քրտինք թափե–լով՝ կազմակերպել արշաւանքը իր ամբողջական տարո–ղութեամբ (զէնք, զինամթերք, տղաներ եւ այլն), ու ինք կը ստանձնէր յիսնապետի պաշտօնը։

Խանասորայ Վարդանի հրամանատարութեամբ եւ աւելի քան 250 քաջարի տղոց ընդգրկուածութեամբ, յուլիսեան առաւօտ մը, Խանասորի դաշտի հանդիպա–կաց լեռներու լանջին կը տեղաւորուին հայդուկները։ Խանասորի դաշտին վրայ կար հսկայ վրանաքաղաք մը, ուր հաստատուած էր քիւրտ մագրիկ ցեղախումբը։ Ար–



Դաշնակապետները 1900 թ. Վանի ճակատամարտից հետո

շալոյսին, հայոց արշաւախումբը, կազմ ու պատրաստ կը սպասէր ազգանշանին ու առաջին համազարկին։

Պատեհ է ընդգծել, որ Նիկոլ Դումանի գաղափա–րական կազմաւորումին ու մեծահոգութեան արտայայ–տութիւն էր այն մօտեցումը, սրբազան պատգամը, որ հայ կռուողը, ֆետային, հայդուկը պէտք չէ զէնք բարձրացնէ քիւրտ մանուկին, կնոջ ու ծեր մարդու դէմ, որովհետեւ նման արարք կը նուաստացնէր հայ յեղա–փոխականը։

Ու այդ օր, 25 յուլիսին, Խանասորայ դաշտին վրայ կարկուտ տեղաց, կրակի ու փամփուշտի կարկուտ։ Տղաքը, վրէժի ու յանդգնութեան զգացողութիւնը իրենց սրտին ու մտքին մէջ ամրապնդած՝ յարձակեցան թշնամիին վրայ։

Անակնկալի եկած քիւրտ մագրիկը՝ ահ ու սարսա–փի մատնուած էր։ Քանի մը ժամուան հրացանաձգու–թիւնը, հրոյ ճարակ կը դարձնէր վրանաքաղաքը։ Նոյ–նինքն ցեղապետ Շարաֆ բեկ՝ կնկայ շորեր հագած, փա–խուստ կու տար մարտադաշտէն։

Փաստօրէն, արշաւանքը իր նպատակին հասած էր։ Թշնամին պատժուած եւ փախուստի դիմած էր։ Նա–հանջի ազգանշանէն ետք տղաքը կը քաշուէին լեռնե–րը։

Մարտի դաշտին վրայ ինկած էին 19 ֆետայիներ։ Անոնց շարքին էր Խոստոմի եղբայրը՝ Կարոն (Արիստա–կէս Զօրեան), որ մինչեւ վերջ կռուած էր, ապահովելու իր ընկերներուն նահանջը։ Կարօ, իր եղբօր նման, երդ–ուած էր անսակարկ նուիրուիլ հայոց բազինին, յանուն ազատութեան եւ իրաւունքի պաշտպանութեան։

Ի լուր արշաւանքին, հայութիւնը եւ ի մասնաւո–րի վանեցիներ ապրեցան հպարտութեան եւ վերապրու–մի պահեր, երբ իմացան, որ նահատակ տղոց վրէժը լուծուած էր եւ հայ ֆետային իր կամքը պարտադրած։

Այդ օրերուն, 125 տարի առաջ, ջարդի ու արհա–ւիրքի կացութեան մէջ, ի տես արշաւանքի մը կատար–եալ կազմակերպումին եւ յանդգուն հարուածին, մարդ այսօր կը շշմի, երբ ուզէ վերապատկերացնել այդ ժա–մանակի դժուարութիւնը, հայութեան ողբերգական կա–ցութիւնն ու թշնամիին բարբարոսութիւնը։

Միասնականութեան ամրապնդման խորհրդանիշ Խանասորայ արշաւանքը, արդեօք ցարդ չի պահեր իր թելադրականութիւնը, արժէքն ու իմաստը, երբ հայոց բանակը կը գտնուի իր տխուր կացութեան մէջ, երբ հայրենիքը կը դիմագրաւէ քաղաքական, տնտեսական թէ ընկերային շատ լուրջ հարցեր, երբ պառակտուած է հայութիւնը՝ իր ընդդիմադիր թէ պետական այրերով, երբ թուրք–ազերին կը փորձէ իրականացնել փանթու–րանական իր ծրագիրը, երբ արեւմուտքի ու արեւելքի ուժեր կռուախնձորի վերածած են Հայաստանն ու Ար–ցախը, երբ ազգային մեր տեսակը, ինքնութիւնն ու պե–տականութիւնը խնդրոյ առարկայ դարձեր են արդի աշխարհի քարտէսին վրայ։

Ի զուր չէ ըսուած «մեզ պէտք է նոր Խանասոր, Խանասորնե՛ր»։

ՀԱՄԲԻԿ ՊԻԼԱԼԵԱՆ



ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՊԱՏԳԱՄԸ



ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐ ՏԻՐԱՄՕՐ ՀԵՏ

Ս. Աստուածածնի Վերափոխման տօնն է։
Հինգ տաղաւար տօներէն չորրորդը։ Տօնն է սուրբ Կոյս Մարիամի երկինք փոխադրութեան։ Արևելեան և արևմտեան բոլոր հին եկեղեցիները պաշտամունքի մեծ յարգանք ունին Ս. Աստուածածնի հանդէպ և արժանաւժայեղ հանդիսութեամբ կը տօնեն Վերափոխման տօնը։ Հայ եկեղեցին նոյնպէս բացառիկ յարգանք կ'ընծայէ Ս. Կոյս Մարիամին և քանի մը տօներ նուիրած է անոր։
Համաձայն եկեղեցական աղբիւրներու, մեր Տիրոջ և Փրկչին Յիսուս Քրիստոսի խաչելութենէն ետք, Ս. Կոյս Աստուածածին 15 տարի ապրեցաւ Երուսաղէմի մէջ, Յովհաննէս Առաքեալի խնամքին տակ. անոր երեցաւ Տիրոջ հրեշտակը և հաղորդեց մարմնով երկինք փոխադրուելու ատիկայը։
Այդ գիշեր, Տիրամայրը աւանդեց իր հոգին. առաքեալները անոր մարմինը մեծ հանդիսութեամբ ամփոփեցին Գեթսեմանիի ձորակին մէջ։
Յուդարկաւորութեան ներկայ չէր Ս. Բարթողիմէոս Առաքեալ։ Աւելի ուշ հասնելով, Ս. Բարթողիմէոս

խնդրեց բանալ շիրիմը, որպէսզի վերջին անգամ տեսնէ Տիրամայրը։ Երբ բացին գերեզմանը, զայն պարապ գտան և հասկցան, որ ան փոխադրուած է երկինք՝ իր Միածին Որդիին քով։

Եթէ բանանք մեր Շարակնոցը, կը տեսնենք, որ մեր հայրապետները որքան գեղեցիկ բառերով կը նկարագրեն Ս. Աստուածածնի տիպարը։ Անոնք Ս. Աստուածածնի մէջ ո՛չ միայն տիպար կինը կ'ուզեն ցոյց տալ, այլ նաև ու մանաւանդ՝ տիպար մայրը։

Այո՛, սուրբ կոյս Մարիամը մեր ժողովուրդի կեանքին մէջ դարձաւ մայրութեան ճշմարիտ ու վաւերական տիպարը՝ խորհրդանիշը։ Այո, տօնը Ս. Աստուածածնի՝ տօնն է մայրութեան, տօնն է նաև հայ մայրերուն։

Տիրամայրը՝ Ս. Կոյս Մարիամը, մեծ յարգանքի ու մեծարանքի առարկան դարձաւ իր մաքրութեամբ, սրբութեամբ, աստուածպաշտութեամբ, ու մանաւանդ տիպար մայրութեամբ։

Նայեցէ՛ք մեր պատմութեան և պիտի տեսնէք, որ հայ մայրերը նմանեցան ու հետևեցան Ս. Կոյս Մարիամին, առողջ պահեցին մեր ընտանիքները, ու մանաւանդ մեր մեծ ընտանիքը՝ ՄԵՐ ԱԶԳԸ։

Այսօր, որևէ ժամանակէ աւելի, հայ մայրը պէտք ունի նմանելու Ս. Աստուածածնին։ Իր տան մէջ, իր գաւակներուն պէտք է աւելիով նուիրուի, իր անհուն սիրով, իր սրբութեամբ ու նախանձախնդրութեամբ։

Այսօր, առաւել ևս պէտք ունինք Ս. Աստուածածնին դիմելու, որպէսզի բարեխօսէ իր Միածին Որդիին ու մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսին, մեր աղօթքներն ու աղաչանքները ընդունելու, մեր ցաւերը փարատելու, հիւանդութիւնները բժշկելու, մեղքերը սրբելու և մանաւանդ խաղաղութիւն ու արդարութիւն հաստատելու աշխարհի վրայ ...։

Եկէ՛ք, Ս. Կոյս Մարիամի օրինակով մենք ևս վերափոխուինք, բանանք մեր հոգիներն ու սրտերը՝ Տէրը ընդունելու և յաւիտեան Իր հետ ըլլալու։

Բարգէն Արքեպիսկոպոս Զարեան

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՆԵՐԲՈՂ՝ ՏԻՐԱՄՕՐ



Սրբուհի Մարիամ, անապական տաճար
Եւ կենարար բանին ծնող և մայր.
Օրհնեալ ես դու ի կանայս,
Բերկրեալ տիրամայր և կոյս:

Անդաստան հոգևոր և համապայծառ ծաղիկ,
Որ ի հոգեհոս անձրևեն՝ հովանաւորեալ ի քեզ՝
Պտղաբերեցեր ի հօրէ՝ յայտնեալ մարդկան.
Օրհնեալ ես դու ի կանայս,
Բերկրեալ տիրամայր և կոյս:

Հաստատութիւն երկնի և երկրի,
Կենդանութեանց բաշխող,
Որ աստուածային լուսոյ ճառագայթիւք
Վայր իջեալ վերականգնեաց
գնախահայրն ի գլորմանէ.
Օրհնեալ ես դու ի կանայս,
Բերկրեալ տիրամայր և կոյս:

Աստանօր երկինք ի յերկրի
Երևեցար և վեհագոյն քերովբէից,
Որ գերկնային զօրացն գտերն
Ի գիրկս քո բարձեալ կրեցեր.
Օրհնեալ ես դու ի կանայս,
Բերկրեալ տիրամայր և կոյս:

Կենացն փայտին հորդեզեր զմեզ ճանապարհ
Ի սրովբեափակ պաշտպանութենէ
Եւ զբոցեղէն գտորն կապտեցեր.
Օրհնեալ ես դու ի կանայս,
Բերկրեալ տիրամայր և կոյս:

Դուռն երկնից և էջք Աստուծոյ,
Խաղաղութեանց միջնորդ,
Որ գնախամօրն զԵւայի բարձեր գերկունքս՝

Տիրացեալ մահուն.
Օրհնեալ ես դու ի կանայս,
Բերկրեալ տիրամայր և կոյս:

Ուրախ լեր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ՝ ասելով
Եւ բազմութիւնք հոգեղինացն
Հրաշալի ձայնիւ երգէին քեզ,
Օրհնեալ ես դու ի կանայս,
Բերկրեալ տիրամայր և կոյս:

Հիւթական, եղական անեղ բանին բնակարան,
Որ զհուրն աստուածութեան.
Յորովայնի քում ընկալար և ոչ բոցակիզար
Որպէս երբեմն գմորենին,
Այլ ծնար զաստուածըն բոլորից.
Օրհնեալ ես դու ի կանայս,
Բերկրեալ տիրամայր և կոյս:

Խորհուրդ կենաց և փրկութեան,
Վերաթևող եղեր աշխարհի.
Երազապէս բարձրացուցեր զհողեղէնքս
ընդ յօղեղէնսըն
Ի բնակութիւնս հրեշտակաց.
Օրհնեալ ես դու ի կանայս,
Բերկրեալ տիրամայր և կոյս:

Տոյք զփառքս ի բարձունքս
Թագաւորին յաիտենից,
Որ եկն և մարմնացաւ ի սուրբ կուսէն
Եւ փրկեաց զարարածքս ի մեղաց.
Օրհնեալ ես դու ի կանայս,
Բերկրեալ տիրամայր և կոյս:

Սահակդուխտ Միսնեցի

951-1003



Սուրբ Կոյս Մարիամէն ծնունդը կ’ընդգրկէր Աստուածորդիին խոնարհ ծնունդը, ցոյց տալով թէ Աստուծմէ ծնած կատարեալ Աստուածը անարգութիւն չհամարեց ծնանիլ Սուրբ Կոյսէն, և իր ծնունդով գերազանցօրէն պատուեց և օրհնեց ու սրբեց մարդկային ծնունդները: Իսկ այդ գերահրաշ ծնունդին պատճառաւ Սուրբ Կոյսը «Աստուածածին» կը կոչուի, որովհետև սոսկ մարդ մը չէր իր ծնածը, այլ նոյնինքն փառաց Տէրը (Ա.Կր 2.8), և բոլորէն վեր եղող յաւիտ օրհնեալ Աստուածը (Հռ 9.5):

Քրիստոսի յղութիւնն ու ծնունդը տեղի ունեցան Սուրբ Հոգիին ներգործութեամբ: Ասիկա երկու ճշմարտութիւններ կը բերէ մեզի.-

- 1.- Քրիստոս ծնաւ առանց մարդկային սերմի, առանց հօր:
- 2.- Սուրբ Հոգին Սուրբ Կոյսին արգանդը սրբեց և զայն յարդարեց իբրև տաղաւար Աստուծոյ բնակութեան, Հօրը զօրութեամբ և հովանաւորութեամբ ծնունդ տալու համար Բանին՝ Աստուածորդիին մարմինին:

Այս կապակցութեամբ հետաքրքրական է Յիսուսի ծնունդին կապուած դրուագին մէջ, երբ Մարիամի նշանածը՝ Յովսէփ կ’անդրադառնայ Մարիամի յղի ըլլալուն և կ’ուզէ լռելեայն արձակել զայն «Տիրոջ հրեշտակը տեսիլքի մը մէջ անոր կը յայտնէ Մարիամի գերբնական յղութեան մասին աստուածային ճշմարտութիւնը, սա՛ր բառերով. «Մի՛ վախնար, քու կինդ՝ Մարիամը քու քովդ առնելու, որովհետև անկէ ԾՆԱԾԸ Սուրբ Հոգիէն է» (Մտ 1.20): Թէ այս դէպքը ե՛րբ տեղի կ’ունենայ, Մարիամի յղութեան քանի՛ երորդ շաբթոն կամ ամսուն՝ չենք գիտեր «բայց յատկանշական է, որ հրեշտակը Մարիամի որովայնին մէջ կազմաւորուող երեխային համար չ’ըսեր «յղացուածը», այլ կ’ըսէ՝ «ԾՆԱԾԸ» (Յուն. το γέννηθén), արգանդին պտուղը դիտելով իբրև արդէն կազմաւորուած մարդ:

Աւետարանէն առնուած շատ հետաքրքրական ուրիշ դրուագ մըն է հետևեալը: Քրիստոսի մայրը՝ Մարիամ, աստուածային աւետիսը ստանալէ և Սուրբ Հոգիով յղանալէ ետք այցելութեան կ’երթայ իր ազգականուհիին՝ Եղիսաբէթի, որ վեց ամսուան յղի էր, և որ ծնունդ պիտի տար Յովհաննէս Մկրտիչին: Արդ, հազիւ Մարիամ Եղիսաբէթի տունը կը մտնէ և իր ողջոյնը կու տայ անոր, ահա Եղիսաբէթի արգանդին մէջ «մանուկը», այսինքն ապագայ մկրտիչը ցնծութեամբ կը շարժի, և Եղիսաբէթ կ’ըսէ. «Երբ ողջոյնդ լսեցի, երեխաս [=մանուկս] ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ» (Դկ 1.41«44): Այստեղ ևս յատկանշական է, որ Եղիսաբէթ իր արգանդին պտուղը արդէն «ՄԱՆՈՒԿ» կը կոչէ, ինչպէս մե՛նք կ’ընենք, զայն նկատելով ո՛չ թէ բջիջներու անորոշ զանգուած մը, այլ՝ թանկագին կեանք մը, որ իր խորհրդաւոր և սքանչելի նախապատրաստութիւնը կ’ապրի:

Մերժել կամ ուրանալ մարդեղութիւնը և Քրիստոսի ճշմարիտ մարմինը, կը նշանակէ մերժել կամ ուրանալ մեր փրկութիւնը: Արդարև, Քրիստոս ինչպէս մեր մեղանչական բնութիւնը պիտի սրբէր սկզբնական մեղքէն, առանց ինք այդ բնութիւնը առնելու: Ինչպէս պիտի կրնար մեր մեղքերը սրբել իր մկրտութեամբ, եթէ չունէր մարմին մը որ Յորդանանի մէջ լուացուեցաւ Յովհաննէսի ձեռքով: Եթէ մարմին չառաւ, ինչպէս կրնար իր մարմինին մէջ սպաննել մեղքը: Ինչպէս իր արիւնը փրկանք պիտի տար բոլոր մարդոց փոխարէն, եթէ ճշմարիտ մարմին եւ արիւն չունէր: Եթէ չունէր մարմին մը որ մահկանացու ըլլար, ի՞նչ պ է ս պիտի կարենար խաչուիլ և մեր բոլորին փոխարէն մահը ճաշակել, մեր մահուան դատապարտութիւնը ինք կրելու համար:

Իսկ եթէ ուրանանք Քրիստոսի մահը և յարութիւնը, կը նշանակէ՝ թէ փրկուած չենք, և ենթակայ կը մնանք մահուան դատապարտութեան:



ՄԱՏԹԷՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆ

ԳԼՈՒԽ 20

- Մշակներու առակը (Մր 20. 1-16)
- Կրկին կանխասացութիւն (Մր 20. 17-19)
- Յակոբոսի և Յովհաննէսի մօր խնդրանքը (Մր 20. 20-28)
- Երիքովի երկու կոյրերուն բժշկութիւնը (Մր 20. 29-34)

ԿՈՉԻՆ ԸՆԴԱՌԱՋ՝ ՍԻՐՈՅ ՊԱՏԱՄԵԱՆ (Մտ 20:29-34)

Այս դրուագին մէջ ականատես կ'ըլլանք երկու մարդոց, որոնք իրենց ճանապարհին գտան ցանկալի հրաշքը: Այս դրուագը կը պատկերէ հոգիի և միտքի դիրքորոշում մը, որուն առջև կը բացուի Աստուծոյ ամենաթանկ նուէրը: Երկու կոյրեր կը սպասէին, և երբ հասաւ առիթը, անոնք բռնեցին զայն զոյգ ձեռքերով: Անկասկած, անոնք լսած էին Յիսուսի զօրութեան մասին, որ անպայմանօրէն ի գործ պիտի դրուէր իրենց համար ևս: Յիսուս այնտեղէն կ'անցնէր և երբ առիթը հանդիսացաւ, անոնք առիթը չփախցուցին:

Կեանքի մէջ մեծ բաներ կան, զորս այդ պահուն պէտք է ընել, այլապէս երբեք չեն իրագործուիր: Մեծ որոշումները կը կայացուին այն պահուն, կամ ալ՝ երբեք: Գործելու պահը շուտ անցեալ կը դառնայ, որոշելու մղումը շուտ կը մշուշոտի: Յիշենք Գործք Առաքելոց գիրքին մէջ Պօղոս առաքելի ճառը Արիսպագոսի մէջ, ուր գտնուեցան ոմանք, որոնք, երբ լսեցին մեռելներու յարութեան մասին, ծաղրի ենթարկեցին. ոմանք ալ ըսին. «Ուրիշ անգամ մըն ալ քեզմէ լսեցինք այդ մասին» (Գծ 17.32): Այդպէս ալ պահը կորսնցուցին:

Այս երկու կոյրերը անտեղիտալի էին: Պաղեստինի մէջ այսպիսի սովորութիւն մը կար՝ ռաբբին փողոցով անցնելու ժամանակ կ'ուսուցանէր, և վստահաբար նման առիթով մարդիկ չէին կրնար լսել Յիսուսի ըսածները և կը սաստէին զանոնք, բայց անոնք կը շարունակէին աղաղակել, որովհետև անոնց համար կենսական էր իրենց պահանջքը՝ իրենց տեսողութեան վերականգնումը:

Այս կոյրերուն հաւատքը թէն անկատար էր, բայց անոնք շարժեցան իրենց ունեցած հաւատքին համաձայն, Յիսուսին դիմելով՝ Տէր, Դաւիթի Որդի: Այս արտայայտութիւնը կը նշանակէր Մեսիա, բայց միաժամանակ կը նշանակէր արքայական կամ երկրաւոր զօրութիւն ունեցող անձնաւորութիւն: Անոնց ունեցածը, այո՛, անկատար հաւատք էր, բայց Յիսուս ընդունեց:

Այս կոյրերը չվախցան ներկայացնելու մեծ պահանջ մը: Անոնք մութացիկներ էին, բայց անոնց խնդրածը դրամ չէր, այլ միայն տեսողութիւն:

Այս երկու կոյրերը երախտագէտ էին: Երբ ստացան ցանկալին, անոնք չհեռացան ու չմոռցան ինչ եղաւ իրենց համար, այլ հետևեցան Յիսուսին: Մեր կեանքերուն մէջ, շատերս ստանալով հոգևոր կամ նիւթական աջակցութիւն, յաճախ կը մոռնանք նոյնիսկ շնորհակալութիւն յայտնել: Երախտամոռութիւնը մեղքերէն մեծագոյնն է: Երիքովի կոյրերը ստացան իրենց տեսողութիւնը Յիսուսի կողմէ և յայտնեցին իրենց երախտարժան հաւատարմութիւնը:

Ճիշդ է, մենք երբեք ալ վարձահատոյց չենք կրնար ըլլալ Աստուծոյ, այն բոլոր բաներուն համար, որ ստացեր ենք, բայց մենք միշտ ալ կրնանք երախտագէտ ըլլալ Աստուծոյ, չէ՛...



Ազգային Առաջնորդարան
Armenian Prelacy of Canada
Prelature Armenienne du Canada



514-856-1200



prelacy@armenianprelacy.ca



www.armenianprelacy.ca



Խմբագիր՝ Քրիստափոր Միքայէլեան



3401 Olivar Asselin
Montreal, Quebec H4J 1L5

Armenia to withdraw soldiers from Artsakh

YEREVAN — Armenia plans to withdraw units of its armed forces currently deployed in Artsakh within the next two months.

“During the war, a number of units from the Armed Forces of the Republic of Armenia went to help the Defence Army of Nagorno-Karabagh,” the secretary of the Armenian Security Council Armen Grigoryan said in an interview with the state-run Armenpress news agency on July 19. “After the establishment of the ceasefire, they are returning to the Republic of Armenia. This process is nearing completion and will end in September.”

While conscript soldiers from Armenia will no longer be deployed to Artsakh for military service, conscripts from the Artsakh Defence Army will continue to serve in Artsakh.

Male citizens in Armenia and Artsakh are mandated to serve in the military for two years upon turning 18. In late June, Armenian authorities indicated that they had decided to shift from conscript to contract service in Artsakh. Deputy chief of the General Staff of the Armenian Armed Forces Sahak Sahakyan said that leadership had developed a package to make the latter more financially attractive. He also said that most contract soldiers deployed in Artsakh would be citizens of Artsakh.

Armenian and Azerbaijani authorities have long been in disagreement about the fourth point of the trilateral ceasefire statement ending the 2020 Artsakh War, which states, “The peacekeeping contingent of the Russian Federation is being deployed in parallel with the withdrawal of the Armenian armed forces.” Armenian authorities have interpreted the statement to mean the withdrawal of Armenian forces from the regions captured by Azerbaijan during the war. The Azerbaijani government has repeatedly said that Armenian forces must leave Artsakh altogether.

Azerbaijani Foreign Minister Jeyhun Bayramov repeat-

ed this demand during a rare meeting with his Armenian counterpart Ararat Mirzoyan on July 16 in Tbilisi.

Bayramov stressed the “necessity of full implementation of all provisions of the trilateral statement signed by the leaders of Azerbaijan, Armenia and Russia, in particular the withdrawal of the Armenian armed forces from the territory of Azerbaijan,” according to a readout of the meeting from the Azerbaijani Foreign Ministry.

Georgian Foreign Minister Ilia Darchiashvili, who hosted the meeting, told reporters that it produced no concrete results.

Three days after the meeting, Mirzoyan said that Armenian authorities “continue to encounter the provocative actions of Azerbaijan towards Armenia and Nagorno-Karabagh, warmongering and expansionist statements.”

Azerbaijani President Ilham Aliyev said in a speech on July 15 that Armenia delays the withdrawal of Armenian forces from Artsakh in violation of the ceasefire statement.

“This is an intolerable situation, because it is completely unacceptable for Armenian armed forces to remain on the territory of Azerbaijan. We are a victorious country and we have restored our territorial integrity. If Armenia does not intend to withdraw its armed forces from the territory of Azerbaijan, then it should let us know this in clear terms, and we will consider our further actions,” Aliyev said. He did not specify what “further actions” would entail.

According to Aliyev, Azerbaijan’s government raised the issue with a senior official of the Russian Defence Ministry several months ago, who promised that the Armenian armed forces would withdraw from Artsakh by June. While that deadline has passed, Russian peacekeepers “do not force them [to withdraw], so to speak,” Aliyev said.

(The Armenian Weekly)

Dr. Armen Aprikian appointed President of the CUA

CHARLOTTETOWN, PEI — On June 26, the Canadian Urological Association (CUA) appointed Dr. Armen Aprikian (McGill University Health Centre) as President for a one-year term from June 2022 to June 2023.

His dedication to the CUA spans several years. He has held many roles, on a volunteer basis, on the CUA Board of Executives, including leadership positions. He has represented the Quebec membership of urologists at the Board level and has chaired the CUA Annual Meeting Scientific Program Committee on two occasions in 2003 and 2011, both

held in Montreal.

Dr. Aprikian has also contributed to the Canadian Urological Association Journal (CUAJ) in his role as Section Editor, in addition to serving as Interim Editor-In-Chief in 2008-2009.

From June 23-26, 2023, he will host the 78th Annual Meeting of the CUA, held at the Sheraton Centre in Montreal, reuniting close to 1,000 urologists nationally and internationally for a scientific conference established to promote the highest standard of urologic care for Canadians and to advance the science of urology.

Armenians still prosecuted for insulting Pashinyan

YEREVAN — Three weeks after a stated decriminalization of slander in Armenia, law-enforcement authorities are continuing to formally prosecute individuals accused of insulting Prime Minister Nikol Pashinyan or other senior officials.

Government-backed amendments to the Armenian Criminal Code enacted last summer made “grave insults” directed at state officials and public figures an offense punishable with hefty fines or prison sentences of up to three months.

